ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հայ գրականության դասընթացներին քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների զարգացման եղանակները

ԱՌԱՐԿԱ՝ Հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Ստելա Գյուլնազարյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Հարթաշենի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Կամոյի Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ 5

2. ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ 7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 12

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է: Այս հետազոտությունը փորձում է դառնալ կրթական զարգացող համակարգին օժանդակող այն միջոցներից մեկը, որն ուղղված է աշակերտների քննադատական մտածողության ձևավորմանը, որն իր հերթին կարող է ծառայել որպես ինքնության մեջ արմատացած հակամարտությունները մեղմելու, կառավարելու և հաշտեցնելու հզոր գործիք: Բացի գիտելիքի տարածման ավանդական դերից դպրոցները կրում են ավելի կարևոր առաքելություն՝ ձևավորել մի սերունդ, որն օժտված է իրական աշխարհի մարտահրավերներին քննադատաբար մոտենալու ինքնավարությամբ: Այդ առումով քննադատական մտածողության զարգացումը կարևորվում է նաև ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդական արժեքների պահպանման տեսանկյունից:

Քննադատական մտածողությունը տեղեկությունը վերամիմաստավորելու և ձևավորելու բարդ գործընթաց է, որը կատարվում է գաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով: Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքներում: Երբեմն կարծիք է հնչում, որ միայն ավագ դպրոցի աշակերտները կարող են ներգրավվել այդ գործընթացում: Սա բավականին սխալ պատկերացում է: Կրտսեր դպրոցի երեխաները ևս պատրաստակամորեն են մասնակցում բարդ խնդիրների լուծում պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ են դրսևորելու որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ: Չէ՞ որ գիտելիքն արժեքավոր է, երբ այն կիրառելի է և ընկալված է հիմնավորապես: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան տեղեկությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը:

Քննադատական մտածողությունը մարմնավորում է անկախ միտքը: Քննադատական մտածողությունը ինքնուրույն մտածողություն է: Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները:

Այս հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ուսուցման համակարգում քննադատական մտածողության ձևավորման կարևորումը նոր մոտեցում է, որը վերջին տարիներին լայն տարածում է գտել, չնայած այն պատմական

հին արմատներ ունի: Լինելով մտածողության այնպիսի եղանակ, որը պահանջում է տրամադրված նյութի յուրացում, խորհրդածություն, վերլուծություն, համեմատություն, գնահատում և կիրառում իրական կյանքի փորձառությունների մեջ՝ մեծապես կարևոր և տեղին է ուշադրություն դարձնել աշակերտների մեջ նրա ձևավորմանն ու զարգացմանը **Հայ գրականության** դասաժամերին:

Աշխատանքի նպատակն է հստակեցնել հայ գրականության դասերի ընթացքում ուսանողների քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների զարգացման հատուկ մեթոդոլոգիաների կիրառման նշանակությունը՝ մասնակցելու անկախ, վերլուծական մտքի գործընթացները զարգացնելու կրթական արդյունավետ ռազմավարությունների վերաբերյալ մանկավարժական խոսույթին:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

1. բացահայտել քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների զարգացման մեթոդները,
2. վերհանել **Հայ գրականության** դասընթացներին քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների զարգացման եղանակները,
3. ուսումնասիրել տարբեր տարիքի աշակերտների քննադատական մտածողության կարողությունը և վերլուծական հմտությունները:

Սույն հետազոտության օբյեկտը հայ գրականության դասերին սովորողների քննադատական մտածողության և վերլուծական կարողությունների օգտագործումն է:

Սույն հետազոտության առարկան քննադատական մտածողության և վերլուծական հմտությունները զարգացնող մեթոդների օգտագործումն է Հայ գրականության դասաժամերին:

Նախանշված նպատակներին հասնելու համար օգտագործվել են որակական տիպի **մեթոդներ**՝ կառուցվածքային հարցազրույցներ և դասարանային դիտումներ, որոնք ապահովել են հայ գրականության դասերին կիրառվող մանկավարժական մեթոդների վերաբերյալ համապարփակ պատկերացում:

1. ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մանկավարժական միջամտությունները պետք է ներազդեն սովորողների ոչ միայն մտածողության, այլև զգացմունքների վրա: Ընդ որում հատկապես գրականության դասերին պետք է ուշադրություն դարձնել դեռահասի զգացմունքայնության, դիտողականության զարգացմանը, նրան ինքնարժևորման հնարավորություն տալ: Այստեղից էլ հետևում է հոգեբանամանկավարժական անձնուղղորդ մոտեցման (սկզբունքի) համապատասխան ուսուցման կարևորությունը: Ուսուցման անձնուղղորդ տեխնոլոգիան կիրառելու անհրաժեշտությունը ենթադրում է նաև ուսուցչի մասնագիտական և անձնային (հոգեբանամանկավարժական) որակների վերափոխում: Այդ փոփոխման ուղիներից են՝

- մեկուսացումից դեպի մասնագիտական միջավայր,
- ուսուցչակենտրոն դասավանդումից դեպի աշակերտակենտրոն ուսուցում,
- մեխանիկական աշխատանքից դեպի ուսումնառություն՝ սեփական փորձի միջոցով,
- մեխանիկական վերահսկումից դեպի պատասխանատվության կիսում,
- աշխատանքի պասիվ կատարումից աշխատանքի կառավարում,
- փոքրածավալ միակողմանի գիտելիքներից մեծածավալ համակողմանի գիտելիքներ:

Այս համատեքստում մեծ նշանակություն է ստանում մանկավարժի ինքնակրթությունը՝ որպես գործունեության ձև, երբ նա ինքն է իրեն նպատակներ առաջադրում և ոչ թե դրանք ստանում է իբրև հրահանգներ: Այս բնագավառին վերաբերող տեսական և կիրառական-գործնական ուսումնասիրությունների փոխզուգահեռ և քննական վերլուծությունների հիման վրա մեր կողմից առաջարկվում է գրականության առանցքային հիմնահարցերի ուսուցման՝ քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան: Այս տեխնոլոգիան ավանդական ուսուցման նկատմամբ ունի մի շարք առավելություններ:

Դրանցից են՝

- սովորողների ակտիվության մեծացում,
- անհատական նախաձեռնությունների դրսևորում, գլխավորն առանձնացնելու կարողությունների ձևավորում,
- նպատակ դնելու և դրան հասնելու ուղիների որոնման կարողությունների ձևավորում և զարգացում,

- գնահատման և ինքնագնահատման հնարավորության ընձեռում,
- գրավոր և բանավոր խոսքի մշակույթի ձևավորում և զարգացում,
- խմբերով աշխատելու (համագործակցային) մշակույթի ձևավորում, շփման և հաղորդակցական հմտությունների զարգացում:

Այս տեխնոլոգիան հարմար է կիրառել ինչպես հին նյութի ամրապնդման, այնպես էլ նոր նյութի ուսումնասիրման ժամանակ: Իրագործումը ընթանում է երեք փուլով՝ **մտագրոհ, իմաստավորում, ռեֆլեքսիա** (հետադարձ կապ): Վերոնշյալ սկզբունքների կիրառման դեպքում՝

- աշակերտը կարողանում է գրավոր կապակցված խոսք կառուցել,
- տիրապետում է գրական լեզվի կենսունակ բառապաշարին,
- որոշակի գիտելիքներ է ձեռք բերում գրականագիտությունից, գրականության տեսությունից,
- ճիշտ ընկալում և ըմբռնում է գրական երկի բովանդակությունն ու ենթատեքստը, կատարում է համեմատական վերլուծություն,
- կարողանում է բանավիճել, հայտնել տրամաբանված կարծիք և համոզմունք,
- նախաձեռնում կամ մասնակցում է տարբեր միջոցառումների,
- գեղարվեստական խոսքի միջոցով արտահայտում է իր հույզերը, ապրումները, մտորումները, համեմատում իր կյանքի որոշ պահերի կամ դրվագների հետ,
- գիտակցում է հայ գրականության՝ որպես մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության դերը:

Հիմնական դպրոցում գրականության ուսուցման խնդիրներից մեկն է վերլուծական ու նկարագրական հմտությունների, ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացումը:

Այս խնդրի լուծման ճանապարհին ուսուցչի կողմից հանձնարարված ուսումնական նյութը պետք է նպատակաուղղված լինի վերլուծելու, համադրելու, եզրահանգումներ անելու կարողությունների զարգացմանը[1]:

[1] Խաչատրյան Ս. Գ. , Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրականդասարաններում, Գ., 2006, էջ 65:

2. ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Քննադատական մտածողություն եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է ***քննադատել*** բառին: Սակայն այս բառը ներառում է ***քննել*** և ***դատել*** բառ-հասկացությունները: Այսինքն, իմաստն է՝ ***որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել:***

Այսօր Հայաստանի կրթական բարեփոխումներով շահագրգիռ մանկավարժները լուրջ որոնումների մեջ են: Դրանք հիմնականում նպատակաուղղված են դասավանդման արդյունավետությունը բարձրացնող նոր մեթոդների, հնարների, եղանակների հայտնագործմանը և գործնականում կիրառելու խնդիրներին: Համաշխարհային մանկավարժության մեջ արդեն կան որոշակի նվաճումներ, որոնք հասանելի են նաև հայ ուսուցչին և հաջողությամբ կարող են գործադրվել մեզանում: Նման նորարական մեթոդների և գործելակերպի մի համակարգ է «Քննադատական մտածողության զարգացումը՝ կարդալու և գրելու միջոցով» (ՔՄԶԿԳՄ) ծրագիրը: Այս ծրագրի նպատակն է կրթել և դաստիարակել արժանավոր քաղաքացիներ՝ այսինքն՝ գործունյա, քննադատաբար մտածող անհատներ, որոնք ի զորու են լինելու ճիշտ կողմնորոշվել ժամանակակից կյանքի ամենաբարդ իրավիճակներում, ազատ ու անկաշկանդ հայտնել սեփական կարծիքները, ուշադիր ու հանդուրժող լինել այլոց կարծիքների հանդեպ և վստահաբար ստանձնել որոշումներ կայացնելու պատասխանատվությունը: ՔՄԶԿԳՄ ծրագրի համակարգը ենթադրում է ուսուցման գործընթացի ***երեք փուլեր***՝

- ***նյութը սովորելուց առաջ (ներածական),***
- ***նյութը սովորելու ընթացքում (հիմնական),***
- ***նյութը սովորելուց հետո (անդրադարձ)***[2]:

Դասավանդման ընթացքում կիրառելով քննադատական և վերլուծական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ համոզվել ենք, որ մեր սաներն էլ կարող են սովորել քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնառության ակտիվ դերակատարները, համագործակցել իրենց դասընկերների հետ: Աշակերտները դառնում են ակտիվ սովորող, մտածող և ստեղծագործող անհատներ: Արդյունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար նրանք պետք է.

[2] Տե՛ս ՀՀ ԿԳ նախարարություն, կրթական ծրագրերի կենտրոն: Կրթության ազգային ինստիտուտ: Ուսուցիչների հինգօրյա վերապատրաստումների պլան և նյութեր, Երևան, 2007:

- զարգացնեն իրենց ինքնավստահությունը և հասկանան, որ իրենց կարծիքներն ու մտքերն արժեքավոր են,
- ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին,
- հարգանքով լսեն բազմազան կարծիքներ,
- պատրաստ լինեն և՛ ձևակերպել, և' հարկ եղած դեպքում կասեցնել սեփական դատողությունները:

Յուրաքանչյուր առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքների ուսուցումը չի կարող երբեք ընդգրկել այն բոլոր գիտելիքներն ու հասկացությունները, որոնք երեխան պետք է ստանա այդ ուսումնական առարկայից: Ծրագրում տրվածը միայն այն հիմնականն է, որն անհրաժեշտ է տվյալ առարկայից ընդհանուր գաղափար տալու համար, իսկ մնացածը երեխաներն իրենք պետք է ինքնուրույն ստանան շրջապատից ու գրքերից: Այսինքն՝ յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է ***սովորել սովորեցնելը:***

Ասվածի ապացույցն է գրական ունկնդրման դասաժամերի կազմակերպումը: Գրական ունկնդրման դասաժամը կազմակերպելիս պետք է նկատառել սովորողների պատրաստվածության մակարդակը, ծնողների սոցիալական վիճակը, դասարանի և դպրոցի գրադարանի ֆոնդը, երեխաների հետաքրքրությունների շրջանակը: Այս ամենը հաշվի առնելով՝ ընթերցանության ստեղծագործությունների ընտրությունը պետք է կատարվի այս պայմանի առկայությամբ. Բնագիրը պետք է լինի ծավալով փոքր՝ պարզ, մատչելի, թեման՝ հոգեհարազատ, գաղափարը՝ հասկանալի:

Գրականության դասաժամերին ինքնուրույն ընթերցանություն կազմակերպելիս պետք է դպրոցականների մեջ սերմանել ընթերցասիրություն, զարգացնել գեղարվեստական ստեղծագործության գաղափարը հասկանալու, եզրահանգումներ, ընդհանրացումներ անելու կարողություններ: Նպաստել նրանց մեջ անձնային բարձրարժեք որակների զարգացմանը, գրագետ ընթերցողի, կարդալու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակմանը: Հաճախ ենք հանդիպում աշակերտների, որոնք նոր են կարդացել ու շատ քիչ բան են հասկացել: Վատ ընկալունակությունը բացատրվում է պարզ պատճառով. պարզապես ուշադիր չեն կարդում: Նրանք չգիտեն ինչպես կարդալ, որ կենտրոնանան հիմնական մտքերի վրա: Ուսուցիչներս, տիրապետելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներին ու հնարներին, կարող ենք օգնել աշակերտներին խորհել կարդացածի մասին:

Դեռևս ամառային արձակուրդներին աշակերտներին առաջարկում ենք ընթերցել իրենց նախընտրած ստեղծագործությունները: Նախօրոք պայմանավորվում ենք ծնողների

հետ, որ նրանք իրենց երեխաներին օգնեն ընտրել մանկական այնպիսի գրականություն, որն աչքի ընկնի պարզությամբ, մատչելիությամբ, խոր գեղարվեստականությամբ և կերպարների ու նկարագրված դեպքերի վառ գունավորմամբ: Նման ստեղծագործությունները երեխաների մեջ անհրաժեշտ հույզեր ու ապրումներ կառաջացնեն: Նրանք կզգան ու հոգեպես կվերապրեն այն ամենը, ինչ նկարագրված է գրքում: ***Երբ աշակերտներին թույլ է տրվում ընտրել ինչ կարդալ, նրանք սկսում են կարդացածի հանդեպ սեփականության զգացում ունենալ***: Դա առաջին վճռորոշ այն քայլն է, որն ընթերցողին դարձնում է ներգրավված:

Սեպտեմբերին՝ ինքնուրույն ընթերցանությանը հատկացված դասաժամին, յուրաքանչյուրը ներկայացնում է իր ընթերցած գիրքը գովազդի տեսքով՝ առանց բովանդակությունը պատմելու: Յուրաքանչյուր աշակերտ ձգտում է լավագույն ձևով ներկայացնել գովազդը, որպեսզի իր ընկերների ընտրությունը կանգ առնի իր նախընտրած գրքի վրա, և բոլորն ընթերցեն այն: Ապա ուղղում ենք հարցեր, օր.՝ «Ինչու՞ ես ընտրել այդ գիրքը», «Ինչպե՞ս է այն կարդացվում», «Դու ծանո՞թ ես այդ հեղինակի որևէ այլ ստեղծագործության», «Անծանոթ բառեր կայի՞ն», «Ինչպե՞ս իմացար դրանց բացատրությունը»:

Այնուհետև քվեարկում ենք և, ըստ քվեարկության արդյունքների, ընտրում որևէ մեկի ընթերցած գիրքը ու որոշում այն ընթերցել: Միասին սահմանում ենք այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է աշակերտներին գիրքն ընթերցելու համար: Հաշվի է առնվում տվյալ գիրքն ընթերցած աշակերտի կարծիքը: Նրանք պետք է իմանան ընթերցանությանը հատկացվող ժամանակը, որպեսզի կարողանան պլաններ կազմել: Ընթերցելուց հետո պետք է մասնակցեն քննարկմանը: Նման հանձնարարությունն օգնում է աշակերտներին ընթերցման ժամանակ ուշադրություն դարձնել այնպիսի մանրամասների վրա, որ նախկինում չէին նկատել:

Մինչ կարդալ սկսելը մտագրոհի միջոցով կազմում ենք բնագրի իմաստի կանխավարկածը: Եթե ընթերցողը նախօրոք գիտի, որ ինքը պատմվածք է կարդալու, ապա մինչ բուն ընթերցանությունն սկսելը փորձում է վերնագիրն ու նկարները օգտագործել որպես բանալի՝ պատմվածքի բովանդակությունը կռահելու համար: Այս դեպքում նա կանգնած է խոր ընկալման շեմին: Տրված ժամանակը լրանալուց հետո սկսվում է քննարկման դասաժամը: Աշակերտները բաժանվում են 4-5 խմբերի: Նրանց ուղղվում են հարցեր, որոնց պատասխանները քննարկվելու են.

- Ի՞նչը ձեզ դուր եկավ այս գրքում:

- Ի՞նչը դուր չեկավ:
- Ինչպե՞ս էր գիրքն սկսվում:
- Ինչպե՞ս ավարտվեց:
- Արդյո՞ք ընդունելի ավարտ էր:
- Ի՞նչն էր կարևոր:
- Գիրքն ընթերցելուց հետո ի՞նչ մտքեր են ծագել ձեր գլխում:
- Ի՞նչն այլ կերպ կանեիք, եթե կերպարներից մեկը լինեիք:
- Ի՞նչ սովորեցիք հերոսներից:
- Ո՞ր կերպարն ամենաշատը ձեզ դուր եկավ:
- Ի՞նչ հասկացաք՝ կարդալով այս գիրքը:
- Կարո՞ղ եք այլ ավարտհորինել:
- Ինչպիսի՞ն էր տրամադրությունը:
- Ի՞նչ կարևոր իրադրություն եք վերհիշել:
- Ո՞րն էր ձեր սիրելի հատվածը:
- Այս գիրքը ձեզ որևէ դեպք կամ որևէ բան հիշեցնո՞ւմ է:
- Ձեր կարծիքով ինչո՞ւ է հեղինակը գրել այս գիրքը:

Այնուհետև խմբերն իրենց ընտրությամբ թղթապանակ են պատրաստում տվյալ գրքի վերաբերյալ: Խմբի անդամների միջև կատարում ենք աշխատանքի բաժանում՝ ընտրելով վերնագրեր:

- Պատմվածքի քարտեզը
- Հեղինակի կյանքը
- Պատմվածքի մանրակերտը
- Մեր տպավորությունը
- Գլխավոր հերոսի բնութագիրը
- Նամակ՝ հերոսին
- Հերոսի նամակը

Խոսնակները ներկայացնում են իրենց խմբերի աշխատանքները: Դրանք փակցվում են միջանցքում, որպեսզի մյուս դասարանների աշակերտները հետաքրքրվեն այդ պատմվածքով և ցանկանան ընթերցել այն: Երբ նույն պատմվածքն ընթերցում են բոլորը և

քննարկում, այդպիսի ընթերցանությունը միավորում է երեխաներին և նրանց մեջ զարգանում են համագործակցային և հաղորդակցական հմտություններ[3]:

Ինքնուրույն ընթերցանության՝ նման ձևով կազմակերպումը նպաստավոր պայմաններ է ստեղծում, որ աշակերտների մեջ արթնանա ընթերցանության հանդեպ սեր, նրանք գնահատեն իրենց ընթերցածը, կարողանան ընթերցանության միջոցով ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ և վերահսկեն իրենց ընթերցածը:

Աշակերտներին ընթերցասեր դարձնելու համար անհրաժեշտ է լուրջ ակնկալիքներ ունենալ յուրաքանչյուրից: Նպաստել երեխաների քննադատական մտածողության զարգացմանը նրանց տարիքին համապատասխան ձևով նշանակում է ուրախ, հրապուրիչ դարձնել և հույզերով հագեցնել մանկությունը[4]:

Քննադատական մտածողության հմտություններին լավ տիրապետելու համար մարդուն անհրաժեշտ է ունենալ, այսպես ասած, դրական մտածողություն: Դա նշանակում է ունենալ արժեքներ, որոնք լինեն չափանիշներն իր գործունեության, աշխատել, որ իր խոսքի ու վարքի միջև անդունդ չլինի, և դնել ու իրագործել նպատակներ, այսինքն՝ տիրապետել նախագծային հարացույցի սկզբունքներին:

Անրաժեշտ է աշակերտներին սովորեցնել քննադատական մտածողությունը և զարգացնել վերլուծական հմտությունները, քանի որ ժամանակակից աշխարհում քննադատական մտածողության կարևորությունն էլ ավելի է աճում, քանի որ տեղեկատվական հոսքերի բազմազանության ու արագության պայմաններում մարդուն անհրաժեշտ են գործիքներ ու մեթոդներ, որոնք նրան հնարավորություն կտան զտել, դասակարգել և գիտելիքի վերածել այն տեղեկությունը, որն իրեն անհրաժեշտ է: Իսկ անհրաժեշտությունն, ինչպես նշվեց վերևում, բխում է արժեքից ու նպատակադրումից, որի դրսևորման առավել արդյունավետ եղանակը նախագծային հարացույցն է:

Քննադատական մտածողությունը, հանդիսանալով մտածողության ձև, դատողություններ անելու մեթոդ, առաջարկում է մի շարք գործիքներ ու հնարներ, որոնք հնարավորություն են տալիս մարդուն հաղորդակցվել ու ստացված տեղեկությունը վերլուծել այնպես, որ դատողությունները կախված չլինեն կարծրատիպերից, իսկ տեղեկությունը, վերածվելով գիտելիքի, կարողանա գործնականում կիրառվել:

---

[3] Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և շեղող հռետորաբանական կիրառուկներ, Երևան 2019, էջ 64-67:

[4] Քննադատական մտածողության տեսության զարգացումը կրտսեր դպրոցում, Ծրագրեր և նյութեր, Երևան, 2002, էջ 122-145:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Քննադատական մտածողության համակարգը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:
- Ակտիվ ուսումնառության շնորհիվ հնարավոր է դառնում ուսման համար նպաստավոր պայմաններ ստեղծել դասարանում: Սրա շնորհիվ աշակերտները՝
  - ✓ կկարողանան կատարել ուսումնական որոնողական աշխատանք,
  - ✓ կկարողանան գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսափորձի միջև եղած փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի,
  - ✓ կդառնան հետազոտող, փնտրող և լուծումներ առաջադրող,
  - ✓ աշակերտները կկարողանան որոշել, թե զանազան տեղեկություններն ինչպես են առնչվում միմյանց հետ,
  - ✓ կկարողանան նոր տվյալները, նոր գաղափարները տեղադրել իրենց ունեցած գիտելիքների համակարգում,
  - ✓ կկարողանան քննադատաբար, ստեղծագործաբար և արդյունավետ կերպով իմաստավորել ցանկացած տեղեկություն,
- Գրականության ուսուցման ներկայացված մոտեցումը առաջարկում է սովորողների քննադատական մտածողության և վերլուծական հմտությունների զարգացման համապարփակ ռազմավարություն: Գործընթացը ներառում է համատեղ որոշումների կայացում, վարկածների ձևավորում, խորը քննարկումներ և խմբային տարաբնույթ առաջադրանքներ՝ ի վերջո նպաստելով նյութի ավելի խորը ըմբռնմանը: Սեր ներշնչելով ընթերցանության նկատմամբ և խրախուսելով անկախ միտքը՝ այս ռազմավարությունը ոչ միայն հարստացնում է գրականությունից սովորողների գիտելիքները, այլև նրանց զինում է անգնահատելի հմտություններով՝ ժամանակակից տեղեկատվական հարուստ աշխարհում նավարկելու համար: Ավելին՝ այն ընդգծում է անձնական արժեքների և գործողությունների ու նպատակների համապատասխանեցման կարևորությունը՝ ցույց տալով քննադատական մտածողության փոխակերպող ներուժը գործնական կիրառման մեջ:

- Ընդհանուր առմամբ այս մոտեցումը հզոր գործիք է՝ 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայելուն պատրաստ, մտածող անհատներ կերտելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրիգորյան Ա., Վերլուծական մտածողության զարգացումն ընթերցանության դասերին, «Նախաշավիղ», 5-6, 2004, էջ 12-16:
2. Երիցյան Ֆ., Քննադատական մտածողության անհրաժեշտությունը դպրոցում, «Նախաշավիղ», 2, 2001, էջ 50-52:
3. Խաչատրյան Ս. Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրականդասարաններում, Գ., 2006:
4. Հարությունյան Գ., Քննադատական մտածողության զարգացման մեթոդները տարրական դասարաններում, «Նախաշավիղ», 5-6, 2004, էջ 4-11:
5. ՀՀ ԿԳ նախարարություն, կրթական ծրագրերի կենտրոն: Կրթության ազգային ինստիտուտ: Ուսուցիչների հինգօրյա վերապատրաստումների պլան և նյութեր, Երևան, 2007:
6. Քննադատական մտածողության տեսության զարգացումը կրտսեր դպրոցում, Ծրագրեր և նյութեր, Երևան, 2002:
7. Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և շեղող հռետորաբանական կիրառուկներ, Երևան, 2019, էջ 64-67: